600.0403.01.11.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 նոյեմբերի 2019 թվականի №403Ա
ք.Երևան

«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԹԻՎ 765 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 13-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 31-ի №272Ն որոշումը և հաշվի առնելով «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2018 թվականի սեպտեմբերի 3-ի №MH/L180767/1.0/RY գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **որոշում է.**

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կողմից «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված և Հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 5-ի «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված հեռախոսային ծառայությունների մատուցման լիցենզիան, ռադիոհաճախականությունների օգտագործման և համարների զբաղեցման թույլտվությունները վերաձևակերպելու մասին» 152Ա որոշմամբ Ընկերության անվամբ վերաձևակերպված №765 լիցենզիայի գործողության ժամկետը՝ մինչև 2034 թվականի նոյեմբերի 4-ը:
2. Ընկերության №765 լիցենզիայի պայմանները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի նոյեմբերի 4-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ս. ԱԳԻՆՅԱՆ

ք.Երևան
1 նոյեմբերի 2019թ.